ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ, ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-ԻՆ, ԺԱՄԸ 10:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԳՈՐԾԱԿԱՐԳԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝** **Արամ Հովհաննիսյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Արսեն Պետրոսյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության**
  - **փաստաթղթաշրջանառության բաժնի պետ՝** **Աննա Միքայելյանի**
  - **հասարակայնության հետ կապերի վարչության ավագ մասնագետ՝** **Անուշ Պողոսյանի**

Քննարկվեց՝

30.06.2025թ. կայացած գործակարգավարական խորհրդակցության ընթացքում ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից տրված հանձնարարականների կատարման ընթացքը և մարզում առկա այլ հրատապ խնդիրներ:

1. Փաստացի ավարտված սակայն ավարտական ակտ չստացած սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Դավիթ Ավետիսյանը ներկայացրեց աղյուսակի տեսքով.

	Անշարժ գույքի անվանումը	**Անշարժ գույքի հասցեն**	**Պետական գույքի կառավարման կոմիտեին չհանձնելու պատճառները**	**Անշարժ գույքի հետ կապված խնդիրների լուծման վերաբերյալ տարվող աշխատանքները**
1	«Արմավիրի Մովսես Սիլիկյանի անվան N6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ ք.Արմավիր Շահումյան 20	Դպրոցի տարածքում առկա է շինություն, որը ներկա պահին չի տնօրինվում դպրոցի կողմից	Քննարկվել է Պետական գույքի կառավարման կոմիտեում, խնդրի կարգավորման ուղղությամբ կառաջարկվի լուծման տարբերակ:
2	«Արմավիրի N 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ ք.Արմավիր Աբովյան 182	Դպրոցի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականնում առկա են հողամասի և շինությունների վերաբերյալ անհամապատասխանություններ	**Փաստաթղթերը գրությամբ ներկայացվել են Պետական գույքի կառավարման կոմիտե:**
3	«Հացիկի Ավետիս Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ,Արմավիր համայնք, գ. Հացիկ 1-ին փ., 26շ.	Դպրոցի տարածքում առկա են շինություններ, որը ներկա պահին չի տնօրինվում դպրոցի կողմից	Քննարկվել է Պետական գույքի կառավարման կոմիտեում, խնդրի կարգավորման ուղղությամբ առաջարկվել է տարբերակ, որը գտնվում է ուսումնասիրության փուլում:
4	«Լեռնամերձի հիմնական դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ, Խոյ խոշորացված համայնք գ. Լեռնամերձ Արագածի 26	Տարածքում առկա է ինքնակամ շինություն	Փաստաթխթերը գտնվում են Խոյ համայնքում ինքնակամ շինությունները օրինականացնելու համար
5	«Վարդանաշենի Մ.Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	ՀՀ Արմավիրի մարզ գ.Վարդանաշեն 1-ին փողոց,24 շենք	Կատարվել է նոր չափագրություն,որից հետո իրականացվելու է սեփականության իրավունքի գրանցման գործընթաց	**Փաստաթղթերը գրությամբ ներկայացվել են Պետական գույքի կառավարման կոմիտե:**

6	Գեղակերտի միջնակարգ դպրոց	ՀՀ Արմավիրի մարզ Խոյ համայնք Գեղակերտ բնակավայր Մ.Մաշտոցի 22	Հարակից շինությունների սեփականատերերի կողմից որոշակի տարածքի զավթում,ինքնակամ շինությունների կառուցում	**Նախապատրաստվել են փաստաթղթերը Պետական գույքի կառավարման կոմիտե ներկայացնելու համար**

2. Սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ՝ Լիլիթ Մուշեղյանը.

Վերջինս ներկայացրեց, որ կատարվել են 2022-2025թթ. հավանության արժանացած սուբվենցիայի ծրագրերի մշտադիտարկման աշխատանքներ, որի արդյունքում առանձնացվել են ընթացքի մեջ, ավարտական փուլում գտնվող, ինչպես նաև դեռևս շինարարական աշխատանքները չսկսված սուբվենցիայի ծրագրերը՝ ըստ համայնքների:

2025թ. ընթացքում ՀՀ կառավարության 6 որոշումներով ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմին հատկացվել է **684.8** մլն դրամ՝ մարզի 7 համայնքի 23 բնակավայրում իրականացված սուբվենցիայի 20 ծրագրի/28 ենթածրագրի կառավարության մասնաբաժնի համաֆինանսավորման նպատակով:

Համապատասխան համայնքապետարանների կողմից ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացված օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա 2025թ. օգոստոսի 1-ի դրությամբ կատարվել է պետության մասնաբաժնի ֆինանսավորում՝ 684.795 մլն դրամ, կատարողականը՝ 100%:

2025թ. օգոստոսի 1-ի դրությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել մարզի 6 համայնքին վերաբերելի 18 ծրագրի/21 ենթածրագրի համար վճարման փաթեթ՝ կառավարության մասնաբաժնի հատկացման համար՝ շուրջ **473.5 մլն** դրամ ընդհանուր գումարով, գումարները կհատկացվեն կառավարության առաջիկա նիստերի ընթացքում, աշխատանքները շարունակվում են:

<u>2025թ. սուբվենցիայի ծրագրեր</u>

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել 2025թ. սուբվենցիոն ծրագրերի 31 ամբողջական փաթեթ, 134 ենթածրագրերով՝ 14.95 մլրդ դրամ ընդհանուր արժեքով, որից 8.18 մլրդ դրամը կառավարության մասնաբաժինն է:

2025թ. սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ ոլորտային գերատեսչությունների կարծիքները և դիտողությունները մարզպետի համապատասխան շրջաբերական գրություններով ուղարկվել են համայնքների ղեկավարներին և առաջարկվել հնարավորինս սեղմ ժամկետում ներկայացնել լրամշակված փաստաթղթերը: Կատարված աշխատանքի արդյունքում ՀՀ ՏԿԵՆ են ներկայացվել ծրագրերի

լրամշակված փաստաթղթեր, 4 ծրագրի լրամշակման աշխատանքները շարունակվում են:

ՀՀ վարչապետի 2019 թվականի մարտի 19-ի թիվ 278-Ա որոշմամբ հաստատված ՀՀ պետական տարեկան բյուջեներով նախատեսված սուբվենցիաներից բացի ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի 12.03.2025թ., 06.05.2025թ. և 12.05.2025թ. կայացած նիստերի ընթացքում դրական հավանության է արժանացել 7 ծրագիր /Մեծամոր -2, Արաքս -2, Բաղրամյան -1, Ֆերիկ -2/:

Դրական պայմանով հավանության է արժանացել 4 ծրագիր /Արմավիր համայնք- 2, Մեծամոր-1, Բաղրամյան -1/:

01.07.2025թ. կայացած նիստերի ընթացքում դրական հավանության է արժանցել ևս 4 ծրագիր /Արաքս -3, Խոյ -1/:

Ընդհանուր առմամբ 15 ծրագիր՝ 86 ենթածրագրով՝ 7.5 մլրդ դրամ, որից 3.9 մլրդ դրամը կառավարության մասնաբաժինն է:

Հետաձգվել է 2 ծրագրի հարցի քննարկումը՝

1) Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի 1-ին թաղամասի թիվ 2 շենքի տանիքի 832քմ մակերեսի, 4-րդ շենքի տանիքի 860քմ մակերեսի, 5-րդ շենքի տանիքի 860քմ մակերեսի, 6-րդ շենքի տանիքի 870քմ մակերեսի, 7-րդ շենքի տանիքի 870քմ մակերեսի, թիվ 13 շենքի տանիքի 1154քմ մակերեսի, 14 շենքի տանիքի 1270քմ մակերեսի, 16 շենքի տանիքի 905քմ մակերեսի, 13Գ շենքի տանիքի 350 քմ մակերեսի, 4Գ շենքի տանիքի 230քմ մակերեսի և 2-րդ թաղամասի 4 շենքի տանիքի 832 քմ մակերեսի վերանորոգման աշխատանքներ,
2) Բաղրամյան համայնքի Դալարիկ բնակավայրի Կոմիտաս 2 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի վերակառուցում, Դալարիկ բնակավայրի Օրջոնիկիձե 2 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի վերակառուցում և Քարակերտ բնակավայրի Հինգհարկանիների փողոց 1 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի վերակառուցում:

<u>2026թ. սուբվենցիայի հայտերի վերաբերյալ Լ. Մուշեղյանը ներկայացրեց, որ</u> չնայած այն հանգամանքին, որ 5 համայնքապետարանների կողմից ներկայացվել է թվով 15՝ 2026թ. սուբվենցիոն ծրագրի հայտ, 69 ենթածրագրերով՝ 9.77 մլրդ դրամ ընդհանուր արժեքով, սակայն ՀՀ կառավարության 16.11.2006թ. N 1708-Ն որոշման մեջ նախագծով նախատեսված փոփոխությունների հաստատումից հետո նորից պետք է ապահովվեն հայտերի լրամշակման և սահմանված կարգով ներկայացման աշխատանքները:

3. Դատական գործերի վերաբերյալ, որոնցով մարզպետի աշխատակազմը հանդես է գալիս որպես պատասխանող կողմ, զեկույցով հանդես եկավ Մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ՝ Լիաննա Հարությունյանը.

Վարչական գործերի վերաբերյալ վերջինս նշեց, որ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի նախկին աշխատակից՝ Նաիրա Սարգսյանի գործով, մարզպետի աշխատակազմի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը վարույթ է ընդունվել 2025թ. հուլիսի 2–ին, դատական նիստի օր է նշանակվել 2026թ. մայիսի 14-ը:

Մելիքյան Գոռի գործի առնչությամբ մարզպետի աշխատակազմի կողմից վերաքննիչ բողոք է ներկայացվել, սակայն վարույթ ընդունվելու վերաբերյալ դեռ չկա տեղեկատվություն:

Արտակ Առաքելյանի գործով նշեց, որ մարզպետի աշխատակազմի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը ամբողջությամբ բավարավել էր, իսկ Արտակ Առաքելյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձվել էր, պատճառաբանվելով, որ ներկայացուցչի լիազորագրի ժամկետը լրացացած է և վճռաբեկ բողոքում նշված չէին դատավարական և նյութական նորմերի հստակ խախտումները:

Մխիթարյան Սոսի գործով վերաքննիչ բողոք է ներկայացվել և՛ մարզպետի աշխատակազմի և՛ Ս. Մխիթարյանի կողմից: Վերջինիս կողմից ներկայացված բողոքի առնչությամբ դատական նիստ է նշանակված սույն թվականի հոկտեմբերի 23–ին, իսկ մարզպետի աշխատակազմի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի դատական նիստի օր է նշանակված 2025թ. հոկտեմբերի 26–ին:

Վերջին զեկուցվող գործը քաղաքացիական գործ էր, որով Մարզպետի աշխատակազմը հանդես է գալիս, որպես պատասխանող կողմ. «Սյունիք ՍՊԸ»-ի կողմից գումարի բռնագանձման պահանջ է ներկայացվել՝ «Թաիրովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հանդիսությունների սրահի վերանորոգման հետ կապված: Գումարի բռնագանձման պահանջը կազմում է 3749000 դրամ, որից չվերադարձրածը 230000, տույժի հաշվարկը 3367000, պետական տուրքը 72000 և փաստաբանի ողջամիտ գումը՝ 80000 դրամ: Օգոստոսի 2–ի դրությամբ Վերաքննիչ դատարանը մարզպետի աշխատակազմի հայցը ամբողջությամբ բավարարել է, «Սյունիք ՍՊԸ»–ի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք:

Խորհրդակցության ավարտին քննարկվեցին աշխատանքային այլ հարցեր, որոնց վերաբերյալ ստորաբաժանումների ղեկավարները մարզպետի տեղակալի կողմից ստացան համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ:

Ամփոփելով քննարկումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ, մարզպետին փոխարինող՝ Բարսեղ Նիկողոսյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099

2025-08-08 16:21:32 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության
բաժնի պետ՝ Աննա Միքայելյան